

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարեկան 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից անկախ խմբագրատան մէջ:

Խմբագրատան տնօրէնը գիտնում են ուղղակի

Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատանը բաց է առաջօրեան 10—2 ժամ:

(Բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն յիշուով:

Յայտարարութիւնները համար վճարում են

խրատման րաւին 2 կոպէկով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Հին-Նախի-
ջնանից, Նամակ Խմբագրին, Ներքին լուսերը—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց խնդիր Միա-
ցեալ ընկերութիւն: Ազգային ժողովի խառնու-
նդի պատու: Նամակ Թուրքիայից, Արտաքին լու-
սերը:— ՀԵՌԱՎԵՐԻՆԵՐ. — ԹԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ՖԷԼԻՍՏՈՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻԱՆԻՑ

Նոյեմբերի 5-ին

Կարգում են (Մշակի) և (Մեղուի) այն յո-
ղուածները, որոնք վերաբերվում են Վեդիգեան
ճանապարհի վարձակաւորներին տուած ռոճիկնե-
րին:

«Մշակը» համարում է այդ անգին ռոճիկնե-
րը անբարոյականացնող: Դորան հակառակ (Մե-
ղու) համարում է քաւոյա կաւացուցիչ և
չնորհաւորում է... Քեզ ինչ մտածում են ինքս
ինձ. միթէ ամեն բան ճանաչում է և անկեղծ է,
ինչ որ գրվում է խօսվում է...

Իսկ խեղճ ծխական ուսուցիչը իր ապրուստը
հաղի հազ կարողանում է պահպանել, ստանա-
լով տարեկան 100 րուբլուց մինչև 500 րուբլ
և այն էլ ինչ չարարանքով, ինչ թուք ու մուրով
է ստանում այդ ռոճիկը: Խեղճը միայնակ, եր-
կար ժամերով ցրտի, փոշու, խոնաւութեան և
չափ անցած անյիշելի նեղութիւնների են-
թարկված, ստանում է իր լուծը. նրա մասին
ոչ ոք չէ մտածում:

Այո, ողորմելի ծխական ուսուցիչն չեն շնոր-
հաւորի, նրան չեն ասի թէ աւելի բարոյակա-
նացնող կը լինէր, եթէ նա կարողանար մարդա-
վարի կեանք ունենալ. ընդհակառակն, նրան
միշտ կասեն որ զարդի նիւթական միջոցը չէ
ներում աւելի տալ. համբերիր, ազգային գործ
է, պէտք է նեղութիւնները տարած, մինչև որ
գրութիւնը փոխվի, լաւանայ...:

Չը գիտեմ անտեսութեան, ազգային տնտե-
սութեան որ կէտիցն են նայում պ. պ. շնոր-

ՖԵԼԻՍՏՈՆ

Վերջապէս Սարա Բերնար, Ֆրանսիացի
տիեզերահաշակ դերասանուհին այսօր մեկնեցաւ
Վիէննայից, պարպեց ամենք ժամները, տեղը
քաղցր յիշատակ թողնելով, և ամենց սրտին մէջ
էլ ցաւ և կսկիծ դետեղելով, որովհետեւ շատերը
չարժանացան զինքը տեսնելու: Երանի նոցա,
որք առանց տեսնելու դարձեալ հանձարին հա-
ւատում և գնահատում են: Ամենքը ասում են
թէ աննման Պատտի երգչուհին անգամ կեան-
քումը այնքան յարգանք և մեծարանք չէր տե-
սած, որքան վայելեց Սարա Բերնար հրէու-
հին, աշխարհիս չըջանը անելով: Այժմ գնում է
Ս. Պետերբուրգ, անտից էլ պիտի չուէ Եգիպտոս,
Հնդկաստան, Չինաստան, Ժաքոն, կարելի է մինչ
հիւսիսային բնեղը: Վիէննայում 10 ներկայա-
ցում տալու համար 25,000 Ֆիլորին վարձատրու-
թիւն առաւ, ի բաց առեալ ծանրագին անթիւ
ընծաները, և անձրեկ նման գլխին տեղացած
անհամար պսակները: Վիէննացիներից տեսած
պատիւը ոչ մի տեղում չէ տեսել. ինքը Վիէն-
նա գալու համար տակաւին փարիզից չը մեկնած
10 ներկայացման տոմսակները Ռինկ թատրոնի
անօրէնը արդէն ծախած էր, զինքը սովորական
գնեքից քառասպատիկ բարձր լինելով հանդերձ:

Ներկայացման գիշերները 3—4 հազար հոգի
Թատրոնին առաջ խանգած էին տոմսակ առնե-

հաւորողները, մի քանիսն սովամահ են լինում,
մի երկուսին առաւ ռոճիկներ տալու համար:

Ամեն թղթակցութիւններից երևում է որ ծը-
խական զարդերից շատերը արդէն ընկնում
են, փակվում են, ուսուցիչները փախչում են,
եղած չեղած գումարները կորչում են, հոգաբար-
ձուները և երեցփոխանները խարդախութիւններ
են անում: Այս ամենը ոչինչ, Բայց որ մի Նա-
հապետեան 6,000 րուբլ ռոճիկ է ստանում,—
պէտք է տոն կատարել:

Շատ լաւ, ապագայ սեպտեմբերին կը կատա-
րենք այդ տոնը: Իսկ այժմ խնդրում ենք ուսու-
ցանել մեզ թէ ինչ անենք, երբ մի կողմից զօ-
րեղ կարիքը, իսկ միւս կողմից անսիրտ և ան-
հոգ ժողովրդի և հոգաբարձուների վարձկաններ
ենք:

Ներքեց որ պատմեն մի դէպք և դա թող
համարվի շնորհաւորութիւնների արձագանք: Մի
բարեկամ ծխական, զիւղական զարդի ուսու-
ցիչ է, ստանում է 150 րուբլ տարեկան ռոճիկ
և ապրում է ընտանիքով: Կասեն, ի հարկէ, որ
հայ ուսուցիչ համար ընտանիք ունենալը պէտք
չէ: Ինչ և իցէ, խեղճը այդ ռոճիկով ապրում
էր, յանկարծ գողերը յափշտակեցին նրա ունե-
ցածը, մի և նոյն ժամանակ նրա մանուկը ծանր
կերպով տկարացաւ տարափոխիկ ախտով, որ տե-
րում էր այդ ժամանակ գուառում: Մանուկը
վախճանվեց: Խեղճ հայրը իր տարեկան ռոճիկ
երկու երրորդը արդէն վատնել էր բժշկի և դե-
ղերի վրա, վերջը նա մի այլ տեղում իր մի քա-
նի ծախած իրերից փոխարինարար պէտք է
ստանար 40 րուբլ մի մահտեսի վաճառականից,
որի գործակաւարը գիւղումն էր: Երկու երեք
չաքաթ է անցնում, մահտեսու գործակաւարը
պահում է թէ փողը և թէ նամակները, նոյն
իսկ դեղերը, որոնք մեռնող մանուկի համար էին
ուղարկված: Գործակաւարը հաւատացնում էր
որ հաշիւ է ունեցել ուսուցչի ազգականների
հետ: Խեղճ բարեկամ ստիպված էր առանց բժշ-
կի, առանց փողի և դեղերի վերադառնալ իր
հիւանդ ընտանիքի մօտ: Յայտնի բան է որ նա
մեծ միտքաւորութիւն զգաց կարողացավ լրացիւնե-
րում որ հայ ուսուցիչներից ոմանք ստանում են
չորսից մինչև վեց հազար րուբլ ռոճիկ, որ ճնմա-

լու համար, տոմսակ չը կար, բայց ամբողջ փո-
խանակ ցրվելու, բացօթեայ տեղ ձիւնին տակ
սպասում էր, գոնէ դերասանուհու կառքը ող-
ջուներու բախտից չը զրկվելու բաղձա-
նօք: Այս հանձնարարատ աղջկան շնորհիւ
վաշխառու հրէաները լաւ դրամ շահեցան, վա-
ղուց տոմսակներ գնելով և մի նստարանը մինչ
40—50 Ֆիլորին ծախելով:

Սարա Բերնար ներկայացուց «Լա դամ
օ կամելիա», «Ֆրուֆրու», «Էրեստի», «Աղբիւն լը
կուվրէօր»: Ինքը ինքն էր Grand Hotel հիւրա-
նոցը, ուր տեղ 6 սենեակ վարձած ունէր,
և մի սենեակ էլ իր շնորհին համար, ո-
րոնք խորոված հաւ էին ուտում: Ամեն
Շիլլէրը չը գիտեմ որտեղ ասած է թէ,
ինչ անիծեալ անհաւատարմութիւն կայ մարդկա-
յին սեռին մէջ. դերասանուհի կայ որ մի կտոր
միւս հազիւ կարողանում է ճարել, իսկ Սարա
Բերնարի շնորհ խորոված վառեակներով են
կերակրվում: Վիէննայի զաւեշտական թերթերը
զանազան կարեկատուներով երևելի դերասա-
նուհուն ծագր արին, ի միջի այլոց «Քիւլէրէթի»
անուն երգիծաւան թերթը մի պատկեր էր չի-
նել: Սարա Բերնար խորխորաբար կանգնած,
իր առաջը ծռակ չըլած թերթին թատրոնի տը-
նօրէնը, աղաչելով որ դերասանուհին թերթին
գայ և գոնէ 3 անգամ ներկայացում տայ, իսկ
Սարա Բերնար պատասխանում է թէ, երբ
պրուսացիք Ուլաս և Լօրէնը Ֆրանսիացուց կը
վերադարձնեն, այն ժամանակ կը գայ և միան-
գամ կը խաղայ:

Բանը կլանում է մանր գաւառական զարդերի
եկամուտները, որ վերջապէս լուս. ու մուշ
փակվեցան տեղիս երկուսն զարդերը, որոնք
գաւառումս առաջ մինչև 15 թւով էին, իսկ
այժմ հազիւ երկուսն են մնացել դեռ ևս:

Դրանով էլ անշուշտ միտքաւորված կը լինի
խեղճը որ նախիջնանցին մի քայլ առաջ անե-
լուց յետոյ, երկուսը յետ է անում:

Ուսուցիչ

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 նոյեմբերի

Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այս տարի
կրկնվում է այն հարցը՝ թէ հարկաւոր է Թիֆ-
լիսում ունենալ մի բարեգործական ընկերու-
թիւն, որ նպատակ ունի առնող չքաւոր երի-
տասարդներին. բայց մինչև այժմ մնացել է ճայն
բարձրագոյ յանապատիւ: Բայց միթէ մեր հա-
րուստները չեն մտածում ձեռնամուխ լինելու
այդպիսի մի ազգօգուտ գործին, որի օգուտները
վաղուց իրանց յայտնի են, որ իրանց պատիւ կը
բերէր: միթէ պէտք է մտածեն միայն իրանց որ-
դուց դատարարակութեան վրա. ապա ինչ պէտք է
անեն այն հարկաւոր խեղճ երիտասարդները, ո-
րոնք զայիս են զանազան զաւառներից, գոնէ
տարրական կրթութիւն ստանալու, որ իրանց խեղճ
աղքը գոնէ իրանց միջնորդութեամբ այս—բերին
արժանանայ: միթէ հարուստի որդին աւարտե-
լով իր ուսումը յանձն կառնի (բացառութիւն
չաւ քիչ) մի որ և իցէ գաւառական քաղաքում
կամ գիւղում դաս տալ: Ոչ, և հազար անգամ
ոչ. հարուստի որդին աւարտելով իր ուսումը
իսկոյն դիմում է կամ համալսարան բարձր գի-
տութիւն ստանալու (չաւ քիչ) և կամ թագա-
ւորական ծառայութիւն: Ապա ունի մը-
նում այդ ծանր պաշտօնը կատարելու.
կրկին Ներսիսեան զարդի խեղճ քաղ-
ցած մնված երիտասարդներին, որոնք ան-
ցուցանում են 7 տարին թշուառութեան և
ստնջանաց մէջ, շատը մինչև անգամ չունե-
նալով կարողութիւն գնելու գրքեր և շո-

կեր որ կ. Պոլսոյ դեսպանները հերթը եկած
հայկական հարցով զբաղվում էին, յանկարծ
չար ստանանն էլ եղիպտական հարցը և Բու-
սապանի պատերազմական տուգանաց խնդիրը
փչեց. լաւ կը լինէր, եթէ յարմար առիթ
գտնելով, աշխարհի վերջը դար. այն ժամա-
նակ ոչ հարց կը մնար, ոչ խնդիր. բայց
բարեբախտաբար կամ զժախտաբար՝ այստեղ,
միամիտները ա՛ռ ու զողով և բաղամիտները
հետաքրքրութեամբ ի դուր սպասեցին երկ-
րագնաւի տապալմանը. ոչ թէ աստղերը վար-
թափեցին, այլ մուրակներից մի փոքրիկ քարի
կտոր անգամ վար չըկաւ, ոչ թէ ջրհեղեղ, բայց
ընդհակառակը այն օրը առանց մի կաթիլ անձե-
ր և գաւու երկրները սովորականից աւելի պարզ
ու պայծառ էր, կարծես թէ աստղաբաշխների
զուշակութիւնները ծաղրել կուզէր:

Շատ հաւանական է որ պոլսեցիք աշխարհիս
կործանումը պատրուակելով «Ժուրնալ դ'Որիա-
նի» բաժանորդագրիները ուղացնում էին, բայց
հիմայ վտանգը անցաւ, մեծ յոյս կայ որ անյա-
պաղ կուղարկեն:

—Լսեցիր, եղբայր, Անգղիոյ խորհրդականաց
ժողովին մէջ դիւանագէտ մի պարոն համակրելի
մի դիտողութիւն է արել հայկական հարցի մա-
սին. որքան պէտք է օւրախ լինինք որ մեզ
համար մտածողներ կան:

—Ինչպէս բան է դա:

—Ահաւասիկ, պարոնը այսպէս է ասել. «Ու-
մանեան կառավարութեան Հայաստանի կամ
Քուրդիստանի մէջ մտցնելիք բարենորոգմանց

րկու դիմում է ուսումնարանի կառավարու-
թեանը, բայց ինչ անէ մի Ներսիսեան զարդ.
400 աշակերտներին, իր կարողածին չափ կարո-
ղանում է օգնել. բայց մէկին օգնելով, միթէ
զրանով ապահովում է և միւսի կեանքը: Ոչ,
սիրելի ընթերցողք, նա անցուցանում է իր
կեանքը դառնութեան մէջ. կան այնպիսիներ,
որոնք միայն թռչակով են (7 ր.) քաւականա-
նում, իսկ կան և այնպիսիներ, որոնք զրանից
քիչով, ուրեմն ձեզ եմ թողնում դուք դատեցէք,
սիրելի ընթերցողք, թէ՛ ինչ պէտք է լինի այս-
պիսի աշակերտի դրութիւնը, ինչ ֆիզիկական
ոյժ պէտք է մնացած լինի նրա մէջ, որ կարո-
ղանայ իր դասերը պատրաստել. ինչպէս կարող
է նա այդ անել, քանի որ նա քաղցած է, քանի
որ մարմինը պահանջում է կանոնաւոր սնունդ:
Ուրեմն ինչո՞ւ վրա նա հոգայ՝ իր դասերի, թէ
կենսական պիտոյքների, Պատահում է մինչև
անգամ, որ ամբողջ ամիսներ ցամաք հացով է
կերակրվում խեղճը, բացի տեսնակի խոնաւու-
թեան և ձմեռվան ցրտից և շատ անգամ չը կա-
րողանալով տանել այդպիսի խիստ կեանք, կըն-
քում է իր կեանքը ուսումնական չըջանում և
թողնում է իր ծնողաց դառնութեան յիշատակ:
Ահա այս է պատճառը, որ ամենայն տարի հա-
րիւրաւոր աշակերտներ թողնում են ուսումը և
իրանց թերի ուսումով դուրս են գալի աս պարէզ,
մտնում են հասարակական կեանք առանց ծա-
նօթ լինելու նրա ամեն մի դիպուածին: Ահա այս
տարտամ վիճակի մէջ է Թիֆլիսի ուսանողու-
թեան վիճակը, որը աւօրեայ հարց պէտք է
զառնայ Թիֆլիսում հիմնելի մի բարեգործա-
կան ընկերութեան:

2.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ հազորդում են հետե-
ւեալ լուրը: Վեդիգեան ճնմարանի մի աշակերտ
5 րուբլ է ուղարկում իր ընկերոջ վրա, որ ու-
սանում է Թիֆլիսի Ներսիսեան զարդում, խնդ-
րելով ուղարկել նրան մի քանի կտոր հայոց
գրքեր և ի միջի այլոց «Հայաստանի սովը և էջ»
մասին ժողովոյս կարծեաց մեծամասնութեան
կողմանէ իմ ունեցած զաղափարիս վրայօք կառ-
կածելու կամ չը կառկածելու պատասխանատու-
թիւնը յանձն առնելու և ըստ այնմ խնդրել մա-
կելու տեսակէտից հեռանալու կամ չը հեռանա-
լու համար ինչ սկզբունքի վրա հիմնվելով, որ
և իցէ մի առաջարկութեան պատրաստուելու
փափուկ պաշտօնիցս այժմէն ինքզինքս հրաժա-
րած համարելու տարակոյս չունենալս, և ժողո-
վէզ զոհացուցիչ մի պատասխան ստանալու ա-
պահով լինելս յայտնելով պարտքս կատարած
կը լինեմ:

—Ես ոչինչ չը հասկացայ, եղբայր, դա հա-
նելուկ է, ինչ բան է:

—Ոչ, եղբայր, քու խելքդ չը հասնիր, դիպու-
մաթի խօսքը որքան անհասկանալի լինի, նշա-
նակում է որ այնքան հանձար կայ մէջը:

—Ո՛ւր ես, եղբայր չես երևում:

—Տանս մէջ փակված պարապում եմ, մի
նոր տեղական պիէսս եմ պատրաստում:

—Ինչ է պիէսայիդ նիւթը:

—Նոր սերմանված զաւաղալ:

—Դա ինչ է նշանակում:

—Կա նշանակում որ իմ պիէսան նոր սեր-
մանված է, յետոյ Սուղուկեանցի «Բաթալա-
լային» նման հեռանկաւ կը մշակվի:

Կըսօ

միաժինը: վերնագրով գրեք: Ներսիսեան զբոս-
րոցի աշակերտը կատարում է իր բարեկամ-
յան ձեռնարկները, բայց այդ գրքերը անցնելով
ձեռնարանի բնակարանը Արշակ Նահապետեանի
ձեռքը, զառաարկով բարեկամում է երբ գրքերի
մէջ նկատում է և վերոյիշեալ գրքերը, որոնք
չափանշուց յետոյ անմիջապէս մի նամակ է գրում
Ներսիսեան զբոսրոցի տեսչին, հրամայելով նրան,
որ գրքերը ուղարկող աշակերտին նկատի, որ
եթէ մի այլ անգամ նա համարձակվի այդ տեսակ
գրքեր ուղարկել, էջմիածնի ձեռնարանի վարչու-
թիւնը իրաւունք կունենայ նրան աքսորել Ներ-
սիսեան զբոսրոցից: Ուրեմն այժմ ձեռնարանը վե-
րին ասեան է դարձել Ներսիսեան զբոսրոցի հա-
մար, իսկ Նահապետեան բոլոր զբոսրոցների տե-
սուչների գլխաւորը:

Եւնք իմացանք որ այժմ Ներսիսեան զբոս-
րոցում կրօնի և մարդակազմութեան ուսուցիչ-
ներ չը կան:

Թիւրքաց Լայստանից ստացված մամուլը
նամակներէն տեղեկանում ենք որ Թիւրքի-
բաղէշի կողմերում, որոնք առաջ, սարերից իջ-
նելուց յետոյ միտ կասպատակելին հայ զին-
քը և մեծ աւարով յետ էին դառնում, այժմ
հայոց կողմից անձնագաղթականութեան փորձե-
րից յետոյ, այլ ևս չեն վստահանում հայ զին-
քին մօտենալ:

Թիւթլիսի ուստաց թատրոնական խումբը
թողել է մեր քաղաքը: Քաղաքային թատրոնը
մնում է առժամանակ առանց ուստ ներկայա-
ցումների, բայց ասում են որ այս օրերս գալու
է Վլադիկովկասից մի այլ ուստաց խումբ: Այդ
խմբի մասին էլ ասում են թէ շատ թոյլ է:

Առաջին անգամ մեզ գրում են: Երգաւոր Կա-
ռուսները ընկած է, գլխաւորապէս այն պատ-
ճառով, որ սահմանագիծը չենացաւ: մեղանից,
իսկ տեղային արդիւնաբերութիւնը շատ անշնան
լինելով, շատերը մեր վաճառականներից սկսե-
ցին թողնել Ախալցխա և տեղափոխել իրանց
առեւտրական գործերը նոր նուաճած երկրները:
Կարս, Արդահան, Ուլի, Բաթում, Միլիքներին
գնելը ցածանում են օրից օր: Եւրոպիայի պուր-
քով այժմ 1 ր. 20 կ., դարին 60 կ., իւղը (կա-
րպ) 10 ր. 50 կ., մսի ֆունտը 8 կ., ձուի 4
հատը 5 կ., կարտֆիլի պուրը 35 կ., կաղաքը
30 կ.: Լոկտեմբերի վերջին եկած առատ ձիւնը
հալվեցաւ այժմ:

Եւր թղթակիցը գրում է մեզ ՍՍԱՎՐՈՊՈԼԻՑ:
Ընդ լրագրի մէջ յայտնած մտքերը առհասարակ
կտակներն մասին և մասնաւորապէս պ. Պոպովի
արած կտակն մասին, շատ ուղիղ են: Այսպիսի
մեծ կտակ անել, ինչպէս արաւ Պոպով, շատ
հազիւ է պատահում և նոյն իսկ այդ պատճառով
նա պէտք է շատ զգոյշ կերպով վարվել: մինչև
կտակ անելը նա պէտք է խորհուրդ տեսնել ազ-
գային գործերին լաւ ծանօթ մարդկանց հետ:
Սոքա կարող էին խորհուրդ տալ թէ այժման
ժամանակին որտեղ և ինչ գործում մեզ աւելի
հարկաւոր են փողերը: ձեռնարկում է Պոպով նախ
քան կտակ անելը խորհրդակցեցաւ իր մի քանի
բարեկամներին հետ, բայց սրանք, ի հարկէ, նոյն-
քան անզգաբարձաւ մարդիկ են, ինչպէս և ինքն
կտակողը: Բայց այդ տեսակ նշանաւոր գործ
վճարում համար, կտակողը պէտք է իսկապէս
գիմեր մեր ազգային մամուլին, որ հասարակա-
կան կարծիքի այլ և այլ կուսակցութիւնների
միակ ներկայացուցիչ է մեղանում: Թէև հակա-
ռակ մտքեր շատ կը յայտնվեն, բայց վերջը հա-
ջը, այնու ամենայնիւ, կը պարզվի: Թող վերջա-
պէս հակական հայերը որ այժման ժամանա-
կին, առանց մամուլի օգնութեանը զիմու-
անհարկն է գործել հասարակական ասպարի-
զում: Անցան այն ժամանակները, երբ մի գործ
կատարելու համար, բաւականանում էին զիմու-
լով այս կամ այն քաղաքում ապրող ի մաս-
տուն համարված մի որ և է ինքնահաւան և
տղտ պատգամախօսին: Այժմ հասարակական
օգտի համար հարկաւոր է հրապարակապէս քն-
նադատել տալ մամուլի, հասարակական կարծի-
քը այդ արտայայտողի միջոցով, իր բոլոր հա-
սարակական գործունէութիւնները: Մամուլը,
լրագրութիւնը անպիտան ոյժ է և քանի կերթայ,
աւելի և աւելի մեծ ոյժ կը դառնայ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԻՆԴԻՐ

«Journal d'Orient» լրագրի մէջ կար-
դում ենք հետեւեալ յօդուածը:

Այն շօշափելի իրողութիւնը որ Բ. Դու-
ռը անդադար տեղափոխում է Վանի նա-
հանգը մահմետական գաղթականներին և
երեւելի քիւրդ առաքակապետ իրողութեան
կարգում հասնելու լուրը, մեզ հասկացնում
էն այդ գործողութիւնների նպատակը:
Երբ գնացանները առաջին անգամ սկսեցին
խօսել Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուա-
ծի գործադրութեան մասին, Բ. Դուռը
աղաղակից. «Թիւրքիայում չը կան նահանգ-
ներ, որոնք բնակեցրած լինէին հայերից,
որովհետեւ կարգում, Վանի, Սփաղի, Խար-
բերդի, Դիարբեքի և Զալէպի վիլայէթներ-
ում հայերը ցրված են և ընդհանուր ազ-
գաւորականութեան թւից 16% են կազմում,
բնակվելով թիւրք կամ մահմետական խիտ
ազգաբնակչութեան մէջ:» Եթէ պետութիւն-
ները ընդունած լինէին այդ դատողու-
թիւնը, հայոց խնդիրը յաւիտեան թաղ-
ված կը լինէր: Բայց Կ. Պոլսի հայոց պա-
տրիարքի եռանդը պատրաստեց մի շան-
թահար պատասխան. նրա կարգադրու-
թեամբ արած ժողովրդագրութիւնը ապա-
ցուցեց որ վեց վիլայէթների մէջ մահմե-
տական ազգաբնակչութիւնը կազմում է
40%, իսկ հայերը նոյն երկրներում կազ-
մում են 60%: Ընդհանուր ազգաբնակչու-
թեան թւի մէջ, Բոսնի շատ յարմար էր
գործելու, բայց դժբաղդապէս Գերմանիան
և Աւստրիան պահանջեցին որ նախ կար-
գադրվի Չէրնոօբիլայի խնդիրը, իսկ հայոց
խնդիրը չը յարուցվեցաւ այդ յարմար բո-
ւաւում:

Այդպիսով մարտիրոս ազգի կորուստը,
շարունակում է Վիեննայի թերթը, վերջ-
նական կը լինէր այդ ժամանակամիջոցում,
որովհետեւ թիւրքերի բոլոր ջանքերը ուղ-
ղված էին հայերին յիշեալ վեց վիլայէթ-
ներում ջնջելու, կամ գոնէ նրանց համե-
մատական թիւը պակասեցնելու, բնակեց-
նելով նրանց մէջ քիւրդերի, չէրքիզների,
մահմետական ալբանցիների գաղթականու-
թիւնները:

Որքան մեծ պատասխանատւութիւն կը
կրէր Եւրոպան, եթէ թոյլ տար կատարվե-
լու այդ խորամանկ գործին: Տեղական պաշ-
տօնականների գեղձուհիներն, մահմետական
առաջակների գործողութիւններին դաշնա-
կից էր յայտնվել սովն էլ: Երկիրը կորցրեց
իր բնակիչների մի մաս, բայց կարծես նա-
խախնամութեան կամքով նոյնքան և աւե-
լի մահմետական են զոհ գնացել, քան թէ
հայերը:

Բայց սկսած գործը շարունակում է
յանդգնութեամբ: Եւնք զրա վրա մասնա-
ցոյց ենք տեսնում այն անձանց, որոնք չեն
կամենում ոչ լսել, ոչ էլ տեսնել: Պէտք է,
վերջապէս, որ 61-որդ յօդուածը կատար-
վի: Թող թիւրքաց հայերը, որոնք յուսա-
հատված են և կարծում են որ նրանց դա-
տը անտես է առնված, սիրտ առնեն. օգ-
նութիւնը կը գայ: Այն ստորագրութիւն-
ները, որոնք զրգած են Բերլինի դաշնագրի
տակ, չեն թոյլ տալիս ոչ մի պետութեան
ոչ տատանել, ոչ էլ յայտարարել:

Թիւրքերի նենգութիւնը, վերջացնում է
իր խօսքը «Ժուրնալ դ'Օրիան», պարտաւո-
րեցնում է Եւրոպային գործելու առանց
յայտարարման:

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աւասիկ այն հրաժարագիր, զոր երէկի
նստին մէջ կարգաց Տ. Մինաս Չերազը
Պարոններ. Մայիս 17-ին, երբ ասենա-
պետ ընտրեցիք զիս, յայտնեցի թէ անար-
ժան էի այս բարձր պաշտօնի, այլ յարեցի.
«Միակ տենչս է հաւատարմապէս գործա-
դրել ձեր որոշումներ և բարեխաւը Ընկե-
րութեան վիճակն:» Այսօր որ կը հրաժա-
րիմ պաշտօնէս, կը համարձակվիմ հռչակել
թէ այդ տենչ իրագործուած է, շնորհիւ
այդ աջակցութեան զոր պաշտօնակիցներս
ընծայեցին ինձ:

Արդարեւ, Տնօրէն Ժողովք, իւր կազմու-
թեան առաջին օրէն ի վեր, կէտ առ կէտ
գործադրած է Ընկերական Ժողովի բոլոր
որոշումներն, յարգելով խորհրդարանական
ազատութիւնն: Նա, Լայստանի և Կիլի-
կիայի տեղական պէտքերն ըստ կարի ու-
սումնասիրելէ յետոյ, պարզած է ձեր առ-
ջիւ իւր հիմնադիր, որ կը արամադրէ ծա-
ւայիլ նախադրութիւն ամեն հայաբնակ
կեդրոնի մէջ ուր զարոյց չը կայ և աղքա-
տութիւն կը տիրէ. նա բերած է ձեզ իւր
կրթական յայտագիր և իւր ելմտացոյց, նա
պատրաստած և գործադրած է Թաղային
Կանոնադրին, ոյր արդէն սկսած ենք բա-
ղել պաշտօններն. նա պատրաստած և գոր-
ծադրած է ձիւղային Կանոնադրին, որ շատ
արդիւնաւէտ պիտի լինէր, թէ Սովկոյց
խնամատար Ընկերական Բանձնաժողովք
հաճէր հաղորդել մեզ իւր ձիւղային ցու-
ցակ, որպէս զի նպաստ խնդրէինք այն աղ-
բիւններէ ոյց նա զիմած է այնքան աշողու-
թեամբ, ցուցակ որ զլացուեցաւ մեզ, շնոր-
հիւ այն փոքրօքի մեքենայութեանց որք
պաշարեցին զմեզ մեր ընտրութեան թուա-
կանէն ի վեր: Երբ կոչուեցանք պաշտօնի,
Ընկերութիւնն ունէր 27 վարժարաններ,
այս թիւ բարձրացած է այժմ 32-ի, մինչ
Ընկերութեան տարեկան ծախքն ոչ միայն
չէ աճած, այլ և նուազած է 1,300 ոսկոյ
չափ, խնայողութիւն որ վանեց անակու-
թիւնն և կաղաւթեց և երկարեց Ընկերու-
թեան կեանքն: Արդի Տնօրէն Ժողովք, ինչ
սակաւակեաց, աշխարհի դրամական անձ-
կագոյն տաղնապին մէջ գանձած է գրե-
թէ 2,100 ոսկիներ, ոյց փոքրագոյն մասն
կը պատկանի նախորդ վարչութեան, այն-
պէս որ ներկայն կընծայէ արդէն ամսական
60 ոսկոյ յաւելում անցնալին վրայ, առանց
պարահանդեսի: Ուրեմն այս Տնօրէն Ժողով
հաստատած է մի դրութիւն որով Ընկերու-
թիւնն, իբր խնայողութիւն և իբր հասոյ-
թի առաւելութիւն, կը շահի տարեկան
2,000 ոսկի:

Ահա, պարոններ, մեր հակիրճ համարա-
տութիւն, որ կը վկայէ ձեզ թէ բարեւո-
քած ենք Միացեալ Ընկերութեանց վիճակն
բարոյապէս և նիւթապէս: Տարակոյս չը
կայ որ այդ բարեւոքում պիտի լինէր անհա-
մեմատ աւելի ընդարձակ, թէ ներքին և
արտաքին դաւեր չը գային չէզոքացունել
վարչութեան ծիղերն: այլ ժամ է փարա-
տել գայնս, անյիշաւարտութեամբ և սիրա-
յօժար գործակցութեամբ:

Երբ այս կրթական միութեան ղեկն յանձ-
նուեցաւ ինձ, ունէի ազատ ժամանակ, և
աշխատեցայ գարունէն ի վեր, Ընկերու-
թեան գրասենեակին մէջ անցունելով եղտ-
նակի գեղեցկագոյն օրերն: Այժմ կը հրա-
ժարիմ զի նորէն ստանձնեցի այն պաշտօն
զոր կը վարէի Պատրիարքարանի մէջ և որ
ահա կը գրաւէ գրեթէ ամբողջ ժամա-
նակս:

Շնորհակալ եմ ազնիւ պաշտօնակիցներէս,
որք լուսաւորեցին զիս իւրեանց իմաստուն
խորհուրդներով և որք, իւրեանց անձուէր
ձիւղեով, բարձրացուցին Ընկերութիւնն մի
վիճակի որ անծանօթ էր նմա: Շնորհա-
կալ կամք Ընկերական Ժողովքէն, ոյր մե-
ծամասնութիւնն մեզ հետ կըլաւ ամեն
ճշմարտամի մէջ, իւր լայն վահանի տակ
պատսպարելով պաշտօնէսութիւնն ամեն քը-
լաքի դէմ: Շնորհակալ կամք Ընկերա-
կան Ժողովքէն ամեն անկիւններէն, որ
առաւատարմութեամբ աղօթացունելով
մինչև Ֆռանսա և Անկիւր:

Ընկերներս և ես կը հրաժարվեմ մեր
պաշտօններէ, այլ, որքան ներէ մեր ժամա-
նակ, պիտի շարունակեմք Ընկերութեան
մեծ գործին ձօնել մեր տկար աջակցու-
թիւն, մանաւանդ երբ մեզ յաջորդ ունե-
նաւք այն նշանաւոր երիտասարդ (Ալէք-
սանդր Մէրեճեմ-Ղալի, փաստաբան), զոր մեր
շուրթեր կանուանեն արդէն և որ անշուշտ
պիտի ընտրէ ազգասէր, պարկեշտ և ձեռն-
հաս պաշտօնակիցներ:

(Մասիս)

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Շատեր ամենախորին ցաւ կը յայտնեն
տեսնելով Ազգ. Ժողովոյ վիճակն, որ ներու-
մեզ ըսել, զրեթէ բոլորովին կորուսած է իր
պատկառանքն ու նշանակութիւնն, որոյ
մէկ տիւր օրինակն ալ տեսնուեցաւ զո-
բաղդաբար այս հինգշաբթի:

Ազգային պատուոյ զգացումը բնաւ չը
րեր որ նոյն օրուան նկարագրութիւն
ընենք: Միայն սա չափը կըսենք թէ ալ
համը փախաւ. ուստի ազգին խնայելու
համար աղէկ կըլլայ որ ներկայ երեսփոխա-
նութիւնը խմբովին հրաժարի, քան թէ
այս վիճակին մէջ պաշտօն վարէ:

Եւր այս առաջարկութիւնը շատ բա-
նաւոր է և ահա իրաց վիճակն ալ այնպէս
կը պահանջէ, որովհետեւ ներգաղթականութիւն
չը կայ Ս. Նախագահին, Դիւանին և անգա-
մեց մէջ, միայն կիրք կայ, և անվստա-
հութիւնը կը տիրէ:

Այս ամենատխուր վիճակը խորին ցաւ
և մեծ վիշտ պատճառած է թէ երեսփո-
խանաց շատին և թէ Ժողովրդեան:

Արդ, երբ երեսփոխանութիւնն ընդհա-
նորին վստահութիւնը չը վայելի և երբ իր
և Նախագահին մէջ անհամաձայնութիւն
կը տիրէ և որովհետեւ Ն. Սրբազնու-
թիւնը Ժողովուրդին համակրութիւնը կը
վայելէ, ազգին շահը կը պահանջէ որ
հրաժարի, այն պայմանաւ որ անմիջապէս
նոր ընտրութիւնը կատարուին:

Ամեն սահմանադրական ազգաց մէջ այս-
պէս կըլլայ: Եւ որովհետեւ մենք ալ սահ-
մանադրական ազգ մ'ենք, հարկ է ու-
րեմն որ խնդրոյն լուծումը Ժողովրդեան
կամեցը ներկայացուի:

Եթէ չուզէ երեսփոխանութիւնն այս
փորձն ընել, դուցէ խնդիրն օր մը զինք
լուծէ, և այն ատեն Սահմանադրութիւնն
ալ վստահուի:

Հետեւաբար, ներկայ երեսփոխանութիւնն
իմաստութեամբ վարուած և վստահեա-
նալքն առած կըլլայ, եթէ միաձայնու-
թեամբ ընդունի մեր այն առաջարկը:

Փափաքելի է որ ամբողջ ազգային մա-
մուլն այս մասին իւր կարծիքն յայտնէ:

(Լոյս)